«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2022

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ	Լ. Վ. Բեթհովենի կյանքն ու երաժշտական գործունեությունը
ԱՌԱՐԿԱ	Երաժշտություն
ՀԵՂԻՆԱԿ	Սուսաննա Սուպիկյան
ՄԱՐԶ	Արմավիր
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ	Մեծամորի միջնակարգ դպրոց

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....3

ԲԵԹՀՈՎԵՆԻ ՄԱՆԿՈՒԹՅՈՒՆԸ.....4

ԲԵԹՀՈՎԵՆԻ ՀԵՏԱԳԱ ԿՅԱՆՔԸ.....6

ՀԵՏԱՔՐՔԻՐ ՓԱՍՏԵՐ ՄԵԾ ԵՐԱԺՇՏԻ ՍԻՐՈ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ.....9

ԲԵԹՀՈՎԵՆԻ ՆԱՄԱԿԸ ԻՐ ՍԻՐԵԼԻՆ.....10

ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ.....11

ԼՈՒՄՆԻ ՍՈՆԱՏԸ.....12

ԿԱԽԱՐԴԱԿԱՆ ՀՆՉՅՈՒՆՆԵՐԻ ԱՐՔԱՆ.....14

<<ԻՆՆԵՐՈՐԴ ՍԻՄՖՈՆԻՈՆ>>.....15

<<Full Elise>>.....17

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ.....18

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ.....19

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Լյուդվիգ Վան Բեթհովեն (ծնվել է՝ 1770թ. Դեկտեմբերի 17, Բոնն-Մահացել է՝ 1827թ. Մարտի 26, Վիեննա), գերմանացի մեծ կոմպոզիտոր, դաշնակահար, դիրիժոր:

Բեթհովենը կլասիցիզմի և ռոմանտիզմի միջև ընկած ժամանակաշրջանի արևմտաեվրոպական դասական երաժշտության առանցքային գործիչ է, ամենահայտնի և ամենակատարվող երգահաններից մեկը: Մոցարտի և Հայդենի հետ միասին համարվում է վիեննական դասական երաժիշտներից: Ստեղծագործել է իր ժամանակ գոյություն ունեցող գրեթե բոլոր երաժշտական ժանրերում: <<Ֆիդելիո>> օպերայի, <<Պրոմեթևսի ստեղծագործությունները>> բալետի, երգչախմբային ստեղծագործությունների, երգերի հեղինակ է: Նրա ժառանգության մեջ ամենակարևոր տեղն են զբաղեցնում գործիքային ստեղծագործությունները՝ սոնատներ դաշնամուրի, ջութակի և թավջութակի համար, կոնցերտներ դաշնամուրի և ջութակի համար, լարային կվարտետներ, նախերգանքներ, սիմֆոնիաներ: Բեթհովենը երաժշտական սկզբնական կրթությունը ստացել է հորից: Հայրը, տեսնելով որդու երաժշտական ունակությունները, երազում էր, որ որդին մանուկ հասակում ճանաչվի ամբողջ աշխարհում՝ կրկնելով Մոցարտի օրինակը: Դրանից դրդված՝ նա հաճախ որդուն ստիպում էր պարապել առանց դադարի: Գերհոգնածությունից և դաժան վերաբերմունքից վիրավորված՝ Բեթհովենը հաճախ էր փախչում տանից:

Պատանի Բեթհովենը երաժշտական կրթությունը շարունակում է ժամանակի ճանաչված երաժիշտ-մանկավարժ Քրիստիան Նեֆեի մոտ: Բեթհովենը սկսում է գրել իր առաջին ստեղծագործությունները: 1787-ին մեկնում է Վիեննա, որպեսզի Մոցարտի ներկայացնի իր գործերը: Վերջինս, լսելով Բեթհովենի երաժշտությունը, ասում է. <<Ուշադրություն դարձրեք այս երիտասարդին, կգա ժամանակ, որ նրա մասին ամբողջ աշխարհը կխոսի>>:

1792-ից երիտասարդ կոմպոզիտորը վերջնականապես հաստատվում է Վիեննայում, ուր ապրում է մինչև կյանքի վերջ:
Կոմպոզիտորը աստիճանաբար սկսեց կորցնել լսողությունը, և ամբողջովին խլացավ: Այս փաստը նրան դրդեց անգամ ինքնասպանության, որը բարեբախտաբար տեղի չունեցավ: Նա շարունակեց ապրել և ստեղծագործել:

Բեթհովենը մահացել է Վիեննայում, լյարդի հիվանդությունից: Նրա շիրիմը գտնվում է հենց այդտեղ, իսկ տուն-թանգարանը՝ Բոննում:

ԲԵԹՀՈՎԵՆԻ ՄԱՆԿՈՒԹՅՈՒՆԸ

Տաղանդավոր կոմպոզիտոր Լյուդվիգ Վան Բեթհովենի երաժշտական տվյալներն ի հայտ են եկել դեռ մանկուց: 4-ամյա երեխան արդեն տաղադավոր էր: Նրա մանկությունն ավելի կարճ է եղել, քան իր հասակակիցներինը: Սակայն ոչ այն պատճառով, որ նա վաղ է դարձել հոգսաշատ, այլ իր լուրջ ու նպատակասլաց բնավորության պատճառով: Տաղանդավոր կոմպոզիտորը ծնվել է 1770 թվականի դեկտեմբերի 17-ին Բոնն քաղաքում: Խոնավ, արևի լույսից պակաս ու աղքատիկ տան մեջ է մեծացել Լյուդվիգը՝ մի հին երկաթյա մահճակալ և կլավիր ստեղնաշարային գործիք է: Նրա լուսամուտից, որ տանիքի տակ էր, երևում էր մի փոքրիկ այգի: Հրաշալի էր այդ այգին՝ ծաղկած ծաղիկներով, աշնանային տերևներով ու ձյան ճերմակ ծածկոցով: Լյուդվիգը հիանում էր այդ ամենով ու նվագում էր իր կլավիրը:

Բեթհովենի հայրը մոլի խմող էր: Հասկանալով տղայի ընդունակությունները՝ նրան հանգիստ չէր տալիս: Նա կոպիտ էր Բեթհովենի հանդեպ և անբարյացկամ: Ժամերով փակում էր տղային նկուղում, ստիպում դաշնամուրի վարժություններ կատարել, և եթե մի նոտա սխալ էր նվագում՝ բանտարկում էր սենյակում մինչև անսխալ նվագելը: Հայրը և ուսուցիչ Պֆայֆերը, վերադառնալով գինետնից ուշ գիշերին, հանում էին Բեթհովենին անկողնուց և ստիպում նվագել իրենց համար: Բնականաբար այս վերաբերմունքն իր ազդեցությունն ունեցավ Բեթհովենի բնավորության ձևավորման վրա: Հետաքրքիր է, որ նա իր աշակերտների հետ նույնպիսի մեղմ չէր վարվում՝ ստիպում էր նրանց առավոտյան ժամը վեցին գալ դաշնամուրի դասերի, իսկ սխալ նվագելու դեպքում փայտիկով խփում էր աշակերտների մատերին:

Հոր կամայականություններն ու անարդար խստապահանջությունը նրա կյանքի վաղ շրջանում հիմք դրեցին ամեն տեսակ իշխանության դեմ պայքարելու հատկությանը, որը դրսևորվում է Բեթհովենի կյանքի տարբեր դրվագներում: Մի անգամ Բեթհովենը հյուր է լինում արքայազն Լիխնովսկու դղյակում, և արքայազնը իր ընկերներից մեկին խոստացած է լինում, որ Բեթհովենը կնվագի, բայց երբ ժամանակը գալիս է, Բեթհովենը գնում է սենյակ հանգստանալու: Նրա հետևից մի քանի անգամ մարդ են ուղարկում, բայց նա չի գալիս: Ստիպված՝ արքայազնն ինքն է գնում Բեթհովենի սենյակ, սակայն վերջինս վերցնում է աթոռը և փորձում խփել արքայազնին:

Մի ուրիշ անգամ Բեթհովենը Գյոթեի հետ զբոսնելիս են լինում, երբ թագավորական շքախմբի են հանդիպում: Գյոթեն զիջում է ճանապարհը և խոնարհվում, իսկ Բեթհովենը շարունակում է իր ճանապարհը՝ առանց նայելու նրանց: Այս դրվագներն այդ երևույթի դրսևորումներն են:

Հպարտություն, անկախություն, համառություն և աշխատասիրություն՝ բնավորության այս գծերը նա ժառանգել է իր պապից: Մինչև տղան մեծանում էր, Եվրոպայում թնդում էր 17-ամյա Ամադեուս Մոցարտի անունը: Լյուդվիգի հորը հանգիստ չի տալիս այս միտքը. <<Իսկ ինչո՞ւ իր որդին երկրորդ <<հրաշամանուկը>>:

Եվ հայրը ստիպում է որդուն ուժից վեր պարապել: Որդին պիտի սկսեր շատ արագ փող վաստակել. դա էր ցանկանում հարբեցող հայրը: Իսկ խեղճուկրակ մայրը հազիվ է հասցնում կերակրել Լյուդվիգին ու նրա երկու եղբորը: Փոքրիկ Լյուդվիգը միանգամից սովորում է նվագել հինգ գործիք՝ երգեհոն, կլավիր, ֆլեյտա, ջութակ ու տավիղ: Առաջին համերգը կայանում է Քյոլնում: Առատ վարձատրության նպատակով, հայրը կեղծում է որդու տարիքը. գովազդային պաստառներում գրվում է 6-ամյա, այնինչ, Լյուդվիգը 8 տարեկան էր: Սակայն այդ ելույթը չի բերում սպասված գումարը: Եվ նորից են սկսվում համառ փոքրիկի տանջալից պարապմունքները:

Շատ վաղ է փոքրիկ Լյուդվիգը դառնում իր ընտանիքի հենարանը: Աշխատում է, չիմանալով՝ ինչ է հանգիստը: Նա մռայլ էր, քչախոս: Սև, հաստ ու խիտ մազեր ուներ, արտահայտիչ հայացք: Նա տարված էր երաժշտությամբ, և հաճախ թվում էր, թե ցրված է: Անփույթ էր իր հագուկապի նկատմամբ: Մի անգամ Լյուդվիգն ասել է.

-Երբ ես դառնամ մեծ կոմպոզիտոր, իմ աղքատիկ հագուստը ոչ ոք չի նկատի:

1782 թվականին Բեթհովենը 12 տարեկան էր: Հրատարակվում են նրա առաջին ստեղծագործությունները: Համառ ու աշխատասեր Բեթհովենը յուրացնում է հռչակավոր կոմպոզիտորների ստեղծագործությունները, ինքն էլ ստեղծագործում տարբեր գործիքների համար:

ԲԵԹՀՈՎԵՆԻ ՀԵՏԱԳԱ ԿՅԱՆՔԸ

Էդիթա Սթերբան և Ռիչարդ Սթերբան (հոգեվերլուծաբան, մանկական հոգեբան, երաժշտության դոկտոր) վեր են լուծել, գերմանացի մեծ կոմպոզիտոր, դաշնակահար, դիրիժոր Լյուդվիգ վան Բեթհովենի անձը՝ հիմնվելով նրա նամակների և այսպես կոչված <<Զրուցագրության գրքերի>> վրա, որը պատկանում է այն շրջանին, երբ խորացավ նրա խլությունը: Սովորաբար զրուցակիցը գրում էր, իսկ Բեթհովենը՝ խոսում, երբեմն նա նույնպես գրում էր, երբ խոսակցությունը գնում էր հանրային վայրերում, որտեղ նա վախենում էր՝ իրեն կլսեն անցանկանալի մարդիկ, քանի որ չէր կարող որոշել իր ձայնի ուժգնությունը: Պահում էր հուշատետր անձնական նշումների համար: Այս բոլորը հնարավորություն է տալիս ավելի մոտ լինելու երաժշտի պոռթկումներին, վախերին, զգացումներին, հոգսերին, ազգականներին, ընկերներին, անձնական հարաբերություններին:

Բեթհովենի առաջին կենսագիրը եղել է Անտոն Անդլերը, ով նրա աշակերտներից էր և իրեն դասում էր Բեթհովենի ամենամտերիմ մարդկանց շարքում: Անտոն Անդլերը մոլեռանդ պաշտամունք ուներ դեպի Բեթհովենը և ներկայացնում էր նրան որպես առասպելական կերպար: Նրա 400 զրուցագրքերից 136-ը վաճառվել է Բեռլինի Թագավորական Գրադարանին, իսկ մնացածը՝ ոչնչացվել:

Ըստ Էդիտա և Ռիչարդ Սթերբանների, Բեթհովենի կենսագիրները փորձել են նրանից իդեալական կերպար կերտել: Բեթհովենի ավելի օբյեկտիվ պատկերը փորձել է տալ Ալեքսանդր Վիլլոք Թայլերը, սակայն նա, Բեթհովենի և նրա զարմիկի հարաբերությունների մասին գրելիս, հանդիպել է դժվարությունների, ինչի արդյունքում Թայլերի գրքի 4-րդ և 5րդ հատորները չեն հրատարակվել, հետագայում հրատարակվել են Հերման Դայտերը և Հիվգո Ռիմանը: Այնուհետև, Բեթհովենի վարքագծի մասին հոգեբանական ճշմարտության հասնելու նպատակով, նրա անձը վեր են լուծում Սթերբանները:

Ինչի արդյունքում էր Բեթհովենն այդքան ատում դաշնամուրի դասերը, ինչն էր նրա երբեմն գոեհիկ պահվածքի պատճառը, անդրադարձել է Գյոթեն:

Դրա պատճառը թաքնված է մանկական տարիքում ունեցած սթրեսների և ծանր ապրումների ետևում, ինչպես ներկայացրինք վերևում, դրանց հիմնական պատճաառը եղել է հոր վատ ու դաժան վերաբերմունքը որդու նկատմամբ: Տղային անընդհատ տանջելն ու նրա մեջ փողի աղբյուր տեսնելը:

11 տարեկանում Լյուդվիգը երգեհոնի դասեր ստացավ Վան դեր Էրենցից, որն այն ժամանակ 70 տարեկան էր: Ծերունին շուտով եկեղեցու երգեհոնահարի պաշտոնը հանձնեց Բեթհովենին: Արդյունքում փոքրիկ Լյուդվիգը ստիպված էր առավոտները շատ շուտ արթնանալ: Նա չէր ըմբոստանում, բայց պատանեկության տարիներին, գրեթե անհաղթահարելի ատելությամբ, ապստամբում էր այդպիսի պարտականությունների դեմ: Դա սահմանափակում էր նրա համար:

Բեթհովենը շատ էր վախենում աղքատությունից: Այդ վախը նրա մոտ ի հայտ է եկել խլության նշանների երևան գալուց առաջ: Երբ երեք արքայազներից Բեթհովենին հատկացվող թոշակը 4.000 ֆլորինից դարձավ 1.600, նա բավականին ծանր տարավ այդպիսի ֆինանսական կորուստը: Բեթհովենը երբեմն քիչ էր ներկայացնում իր եկամուտները, որպեսզի լրացուցիչ գումար ստանա: Աղքատության հանդեպ նրա վախն արտահայտվում էր նաև նրանով, որ գնումներ կատարելիս նախապատվություն էր տալիս ամենաէժան ապրանքներին: Նա ամեն անգամ նոր ծառա էր վարձում, որը կրկին արժանանում էր մյուսների բախտին: Երբ ծառան գնում էր ալյուր գնելու, Բեթհովենը ստիպում էր նրան իր հետ չափողիկ վերցնել: Այս երևույթը ըստ հոգեվերլուծաբանների աղքատության վախի առկայության ապացույցն է:

Բեթհովենը նաև վախենում էր, որ իր նոտաները կգողանան:

Նա տանել չէր կարողանում իր եղբայրների կանանց և շատ անգամ անհիմն մեղադրանքներ էր ներկայացնում նրանց: Օրինակ, երբ մահացավ նրա եղբայրներից մեկը՝ Կարլը, Բեթհովենը նրա մահվան մեջ սկսեց մեղադրել կնոջը, ասելով, թե նա թունավորել է Կարլին: Անգամ երբ փորձաքննությունը ժխտեց այդ մեղադրանքները, Բեթհովենը միևնույն է մնաց իր համոզմանը:

Բեթհովենի մայրն ու եղբայրը մահացան թոքախտից, և նա միշտ մտածում էր, որ ինքն էլ կմահանա թոքախտից: Այս ախտանշանը հոգեբանության մեջ անվանում են <<նույնացում>>: Դա հատկապես այն մարդկան հետ է լինում, ում կորստի հետ զգացմունքային կապը լինում է սիրո և թշնամության խարնուրդ:

Ըստ հեղինակների՝ անհրաժեշտ է դիտարկել նաև Բեթհովենի՝ իր մոր հետ ունեցած հարաբերությունները, սակայն նյութերը բավարար չեն ամբողջական պատկեր ստանալու համար: Ունեցած տվյալներից տպավորություն չի ստեղծվում, որ մայրը պաշտպանել է տղային հոր վատ վերաբերմունքից: Նա հաճախ իր երեխաների թողնում էր աղախինների հոգատարությանը: Ուշադիր չէր երեխաների մաքրության հանդեպ, և դա հետագայում դրսևորվում է Լյուդվիգի մոտ: Փոքր ժամանակ, երբ խոում էին իրեն մաքուր պահելու մասին, նա պատասխանում էր, որ երբ մեծանա դրա վրա ոչ ոք ուշադրություն չի դարձնի: Իսկ արդեն մեծ տարիքում՝ նրա սենյակը միժշտ թափթփված էր, աթոռների վրա կեղթոտ ափոներ, նոտաների տպագրություններն անփույթ թափթփված և փոշու մեջ կորած, սենյակի կենտրոնում ջրի փոքրիկ լճակներ (ստեղծագործելու պահին, երբ շատ էր շոգում, այդպես ջուր էր լցնում գլխին):

Եղբոր կնոջ՝ Յոհաննայի նկատմամբ Բեթհովենի տածած արտելությունը ցույց է տալիս, որ սերը մոր հանդեպ, որն այնքան շեշտում են կենսագիրները, թշնամանքի և բացասականության մեծ խորհուրդ է իր մեջ պարունակում: Լյուդվիգի վախը, որ կթունավորի կնոջ միջոցով, ցույց է տալիս, որ դա ծագել է վաղ շրջանում՝ մոր հետ երեխայի ունեցած հարաբերություններից:

Հենայն դեպս, նրա այդ վախը ի կատար չածվեց, նրան ոչ ոք չթունավորեց: Բեթհովենը մահացավ 1815 թվականի մարտի 26-ին թոքաբորբից, ամպրապի ժամանակ: Կայծակի մի ուժգին փոյլատակում՝ ուղեկցվող ուժգին որոտով, հանկարծ շլացուցիչ լույսով լուսավորեց սենյակը: Բեթհովենը բացեց աչքերը, բարձրացրեց վեր բռունցք արած աջ ձեռքը ու մի քանի վայրկյան դեմքի

շատ լուրջ, սպառնալից արտահայտությամբ նայեց վերև: Դա ըմբոստության մի վերջին ցույց էր՝ մահվան վայրկյանին:

Սրանք այն հետաքրքրական տեղեկություններից են, որ տալիս է մեզ Էդիթա և Ռիչարդ Սթերբաների աշխատանքը: Ինչ խոսք՝ Բեթհովենի ստեղծագործությունները իրենց ազդեցությունն ունեցել են և դեռ կունենան սերունդների վրա: Եվ շատերն են ոգեշնչվել նրա սեղծագործություններից, որոնց շնորհիվ էլ նա գնել է իր հավերժ ապրելու ուղեգիրը:

Լյուդվիգ վան Բեթհովենը դառնում է մեծ երաժիշտ՝ համառության ու աշխատասիրության շնորհիվ: Սակայն այդպես էլ տաղանդավոր մարդ չի գտնում իր անձնական երջանկությունը: Նա ապրել է 57 տարի: Մի քանի անգամ փորձել է ամուսնանալ, բայց այդպես էլ չի հաջողվել:

ՀԵՏԱՔՐՔԻՐ ՓԱՍՏԵՐ ՄԵԾ ԵՐԱԺՇՏԻ ՍԻՐՈ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

1881 թվականը Բեթհովենի ստեղծագործական ծաղկման ժամանակաշրջանն էր: Հենց այդ տարի էլ երկնեց իր՝ բերկրանք արտահայտող Երկրորդ սիմֆոնիան: Ներշնչանքը Ջուլիետան էր… Օրիորդը երաժշտի սաներից էր: Նա շատ գեղեցիկ, զարմանալի խոր աչքեր ուներ: Եվ այդ աչքերը տեսնելուց ի վեր Բեթհովենը հասկացավ, որ դարձել է դրանց գերին:

Կոմպոզիտորն օրիորդի նկատմամբ առավել խիստ էր, քան՝ մեկ այլ սանի. ցանկանում էր, որ աղջկա նվագը ներդաշնակի գեղեցկությանը:

Բեթհովենը Ջուլիետային երբեմն հանդիպում էր նաև բարձրաշխարհիկ սալոններում և նկատում, որ օրիորդը հրճվանքով է որսում շրջապատի հաճոյախոսությունները:

Բնականաբար, այդ ամենը դուր չէր գալիս ուսուցչին… Սակայն նա չէր էլ պատկերացնում, որ ամառային մի գեղեցիկ օր…

Բեթհովենը ամառային մի գեղեցիկ օր նամակ ստացավ: Ծրարից թեև մանուշակի հոտ էր գալիս, սակայն պարունակում էր բոլոր հույզերն ու սպասումները խորտակող խոսքեր. <<Ես հեռանում եմ հանճարից, ով արդեն հաղթել է, և գնում եմ այն հանճարի մոտ, ով դեռ պայքարում է ճանաչում ձեռք բերելու համար>>:

Բեթհովենը կարդում էր ու կարդում, բայց աչքերին չէր հավատում, մտածում էր՝ Ջուլիետան դավաճանել է իրեն: Նրան ավելի ցավ էր պատճառում այն, որ ինքը երաժիշտ էր, իսկ աղջկա ընտրյալը՝ <<ընդամենը>> կոմս: Բեթհովենը բազում անքուն գիշերներ անցկացրեց . չէր կարողանում նվագել, ստեղծագործել ու երբեմն ինքն իրեն հարցնում էր՝ <<Մի՞թե ես դեռ երաժիշտ եմ>>:

Մի օր, բազում տառապալից ժամեր անցկացնելուց հետո, երաժիշտը վերջապես նորից մոտեցավ դաշնամուրին, ձեռքերը վեր բարձրացրեց և ուժգին հարվածեց ստեղներին: Հետո՝ նորից ու նորից: Այդ հարվածներով նա կարծես ցանկանում էր դեպի անցյալ ուղարկել իր ցավն ու տառապանքը: Եվ օ՜հրաշք, մոլեգնած ձեռքերն աստիճանաբար հանդարտվեցին, հանդարտվեցին և ծնունդ տվեցին մի չքնաղ մեղեդու, որը հետագայումպիտի կոչվեր <<Լուսնի սոնատ>>: Իսկ խմբագրատուն տարած նոտատետրի առաջին էջի ներքևում նույնիսկ անզեն կարելի էր տեսնել գրված և ջնջած ընծայագիրը՝ <<Նվիրվում է կոմսուհի Ջուլիետա Գվիչարդեին>>:

ԲԵԹՀՈՎԵՆԻ ՆԱՄԱԿԸ ԻՐ ՍԻՐԵԼԻԻՆ

Հուլիսի վեց, 1801թվ(լուսաբացին)

Հրեշտակ իմ, կյանք իմ երկրորդ ես՝ այսօր գրում եմ քեզ միայն մի քանի բառ և այն էլ մատիտով քո (մատիտով): Վաղը ստիպված եմ նոր բնակարան փնտրել ինձ համար, այնքան անհարմար է, հատկապես հիմա:

Եվ ինչի՞ համար է այս խորը թախիծը անխուսափելիից առաջ: Մի՞թե սերը կարող է գոյություն ունենալ առանց զոհերի, առանց զոհերի, առանց ինքնամերժման: Դու կարո՞ղ ես անել այնպես, որ ամբողջովին ես պատկանեմ քեզ, իսկ դու ինձ: Աստված իմ: Սերը պահանջում է ամեն ինչ և ունի դրա իրավունքը: Ես զգում եմ դա այնպես ինչպես և դու: Միայն թե, դու շատ հեշտությամբ ես մոռանում այն, որ ես ապրում և պետք է ապրեմ մեր երկուսի համար՝ ՔՈ և ԻՄ: իմ ճանապարհորդությունը սարսափելի էր, ես վերադարձել եմ երեկ առավոտյան ժամը չորսին, ձիերը շատ քիչ էին, ես էլ որոշեցի այլ ճանապարհով գալ, սարսափելի էր: Բայց հետաքրքիր էր այն զգացողությունը, որը այցելեց ինձ ճանապարհի վերջում ես երջանիկ էի, որովհետև ես հաղթահարեցի դժվարություններ:

Լավ, ինչևէ: Երևի շուտով մենք կհանդիպենք՝ գուցե հենց այդ պատճառով էլ ես չեմ կարող քեզ ասել այն եզրակացությունների մասին, որ արել եմ իմ կյանքի վերաբերյալ: Գիտե՞ս, եթե մեր սրտերը միասին բաբախեին, ես հավանաբար դա չէի անի: Հոգիս լի է այն ամենով, ինչ կուզեի քեզ ասել:

Լինում են պահեր, երբ ինձ թվում է, որ լեզուն անզոր է: Ուրախացիր, զգա կյանքը, բայց խնդրում եմ շարունակիր մնալ իմը: Մնա իմ անփոխարինելին, միակ գանձը: Մնացած այն ամենի մասին ինչ լինում և պետք է լինի մեզ հետ, հոգում է ԱՍՏՎԱԾ: ՔՈ ՀԱՎԱՏԱՐԻՄ:

ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ

Բեթհովենը 18-րդ դարի սոնատասիմֆոնիկ ժանրի երաժշտությունը հասցրեց իր գագաթնակետին: Կոմպոզիտորի մի շարք ստեղծագործություններում արտահայտվեցին այդ ժամանակ տեղի ունեցող ֆրանսիական բուրժուական հեղափոխության գաղափարները՝ մարդկության պայքարը հանուն ազատության, պայքարը մենիշխանության և բռնակալության դեմ: Բացի դրանից նրա ստեղծագործությունները արտահայտում են անձնական ներաշխարհի քնարական-դրամտիկական զգացմունքներ, բնության և շրջապատող աշխարհի նկատմամբ ունեցած ապրումներ և խոհեր: Ուստի նրա երաժշտությունը բազմաբնույթ է:

Գրել է տարբեր ժանրերում, ունի 9 սիմֆոնիա, 11 ուվերտյուրա, 5 դաշնամուրային և 1 ջութակի կոնցերտներ, 32 դաշնամուրային սոնատներ, գործիքային անսամբլներ (կվարտետնետ և տրիոներ), մանրանվագային պիեսներ, երգեր <<Հանդիսավոր Մեսսան>> և 1 օպերա՝ <<Ֆիդելիոն>>: Իր հանրահայտ <<Հերոսական սինֆոնիա>> ցանկանում էր նվիրել Նապոլեոնին: Բայց իմանալով, որ նա իրեն կայսր է հռչակել, ցասումով է լցվում: Բեթհովենը պատռում է ընծայագիրը և սիմֆոնիան անվանում <<Հերոսական>>:

Բեթհովենը խուլ վիճակում արարում է երաժշտական արվեստի իր գլուխգործոցները՝ սիմֆոնիաները, <<Ապասիոնատը>>, <<Ֆիդելիո>> օպերան, <<Էգմոնտը>>, <<Կորիոլան>> և այլն: Կոմպոզիտորի կյանքի վերջին շրջանին են պատկանում <<Հանդիսավոր Մեսսան>> և աշխարհահռչակ 9-րդ սիմֆոնիան: 1802-12թթ.՝ ստեղծագործության ծաղկման շրջանում, Բեթհովենը գրել է Երկրորդից Ութերորդ սիմֆոնիաները, դաշնամուրի 4-րդ և 5-րդ կոնցերտները, ջութակի կոնցերտը, 5 կվարտետ, <<Կրեյցերյան սոնատը>>, <<Ավրորա>>, <<Ապասիոնատ>> դաշնամուրային սոնատները, <<Ֆիդելիո>> օպերան և սիմֆոնիկ նախերգանքներ: 1813-17թթ-ին՝ ստեղծագործական նոր վերելքի շրջանում, Բեթհովենըգրել է իր գլուխգործոցը՝ <<Իններորդ սիմֆոնիան>>՝ առաջին անգամ այդ ժանրում օգտագործելով խմբերգը որպես վերջամաս. Այն ավարտվում է <<Բերկրանք>> հիմնով: Սիմֆոնիան ամբողջացնում է ազատության և երջանկության համար մղվող պայքարի հերոսականությունը:

Առավել ճանաչված են նրա <<Պաթետիկական սոնատը>> ու <<Լուսնի սոնատը>>՝ լեցուն բուռն զգացմունքներով և պոռթկումներով: Բեթհովենի կամերային ստեղծագործությունները (դաշնամուրի 32 սոնատ, 10 սոնատ ջութակի և դաշնամուրի համար, 16 լարային կվարտետ, 7 դաշնամուրային տրիո) աչքի են ընկնում գեղարվեստական մտահղացումների բազմազանությամբ: Նա ստեղծել է նաև գործիքային բազմաթիվ մանրանվագներ, երգեր և մշակել տարբեր ազգերի ժողովրդական երգեր:

ԼՈՒՍՆԻ ՍՈՆԱՏԸ

Մեծ երաժշտի մի շատ հայտնի ու գեղեցիկ ստեղծագործություն, որը կրում է Լուսնի Սոնատ անվանումը, նվիրված է եղել իտալուհի Ջուլիետտա Գվիչչարդիին… որը նվաճեց մեծ կոմպոզիտորի սիրտն ու այնուհետ դաժանորեն փշրեց այն… սակայն հենց Ջուլիետտին ենք պարատական այդչափ գեղեցիկ խորապես հոգին թափանցող սքանչելի ստեղծագործության համար:

1787թ. նա մեկնեց Վիեննա ու հենց այստեղ հանդիպեց իր առաջին ու մեծ սիրուն՝ կոմսուհի Ջուլիետտա Գվիչչարդիին… և հանճարեղ կոմպոզիտորին սպառնացող խլության սարսափն ասես փոխարնիվեց անսահման երջանկության զգացումով… Բեթհովենը հասկանալով, որ վերջնականապես կորցնում է լսողությունը, գրել է ընկերոջը. ""Ես քարշ եմ տալիս թշվառ գոյություն.. ես խուլ եմ..իմ մասնագիտության համար առավել ահավոր բան լինել չէր կարող…ու, եթե ես ազատվեի այս հիվանդությունից, ես ողջ աշխարհը կգրկեի…""

Ջուլիետտան 17 տարեկան, կենսախինդ, հմայիչ աղջնակ էր..Բեթհովենը սիրահարվեց միանգամից: Նա խոտովանեց իր ընկերների, որ սիրում է այդ հրաշք աղջկան, և, որ նրա շնորհիվ զարմանալի ու հաճելի փոփոխություններ է նկատում: Մի քանիամիս անց Բեթհովենը առաջարկեց Ջուլիետտայնի մի քանի անվճար դաշնամուրի դասեր պարապել նրա հետ: Աղջիկը մեծ ուրախությամբ համաձայնեց, և ի նշան երախտագիրության իր ձեռքով ստեղծագործական մի քանի վերնաշապիկ նվիրեց կոմպոզիտորին…Բեթհովենը խիստ ուսուցիչ էր, երբ չէր զոհացնում Ջուլիետտի նվագը, նա բարկությամբ հատակին էր նետում տետրերն ու ցուցադրաբար շրջվում, իսկ աղջիկը լուռ հավաքում էր…Նրա առաջին մասը սկսում է դանդաղ ու շատ նուրբ, լի քնքշությամբ, իսկական երջանկության զգացողությամբ…իսկ ավարտը հնչում է ինչպես փոթորիկ, որը սրբում տանում է իր ճանապարհին ամեն ինչ…կոմպոզիտորի աշխարհը փլուզվեց, իսկ կյանքն իմաստազիկվեց…Մեծ երաժիշտն ավարտեց իր հիասքանչ ստեղծագործությունը ցասման, մեծագույն վիրավորանքի ու բարկության մեջ, երբ իմացավ, որ իր Ջուլիետտան ամուսնացել է 18 ամյա մի կոմսի հետ……

Նա թանկ վճարեց այդ սիրո համար… այդպիսի կրքերը ամայացնում են հոգին… թուլացնում… նա գրեթե մահվան եզրին էր… Նա հուսահատության սարսափելի պահեր ապրեց… Ձախողվեց նաև առողջանալու վերջին հույսը…նա գրում է.

<<Օ, նախախնամություն, թույլ տուր գեթ մի անգամ, մեկ օր, ընդհամենը մեկ օր տեսնել իսկական ուախություն… ինձ արդեն վաղուց անիմանալի է ճշմարիտ ուրախության խորը հնչյունները… Երբ, օ, Աստված իմ, երբ կտրվի ինձ գտնել այն վերստին… Մի՞թե երբեք… Ոչ, շատ դաժան կլիներ…>> հատակին թափված տետրերը…. Պատմում են, թե մի անգամ, երբ Ջուլիետտան կապել է երաժշտի մետաքսե ժապավենն ու համբուրել նրա ճակատը, Բեթհովենը մի քանի շաբաթ նույն հագուստով է մնացել… մինչև որ ընկերները նրբանկատորեն ակնարկել են, թե այնքան էլ

թարմ տեսք չունի հագուստը… Բեթհովենի զգացմունքները բարձրակետին էին, ծնվեց հրաշք Լուսնի Սոնատը… որը նվիրված էր Ջուլիետտային, ի նշան մեծ սիրո, հույսի և հիացմունքի… <<Կյանքս ավելի ուրախ է դարձել,-գրում է նա Վեգելեսրին,-ես հաճախ եմ հանդիպում մարդկանց… Այս փոփոխությունը մի անուշիկ աղջկա հմայքը բերեց… նա սիրում է ինձ..ես սիրում եմ նրան… Առաջին երջանիկ պահերն են՝ իմ կյանքի վերջին երկու տարվա ընթացքում… Վախը, բազմաթիվ հիասթափությունները, կործանված երազանքները ինքնասպանության մտքեր էին ծնում…սակայն մեծ կոմպոզիտորը գտավ իր մեջ ուժ հաղթահարելու ամեն դառնություն, դժվարություն և բացարձակ խլության մեջ սքանչելի գլուխգործոցներստեղծեց…

Մի քանի տարի անց Ջուլիետտան վերադարձավ Վիեննա և այցելեց կոմպոզիտորին..պատմեց իր հիասթափությունների ու դժվարությունների մասին, որ սնանկացել են, որ անչափ ծանր ու դժվարի կյանքով է ապրում,. Խնդրեց օգնել իրեն: Բեթհովենը լինելով բարի ու ազնիվ մարդ, նրան մեծ գումար տվեց՝ առաջարկելով հեռանալ ու այլևս երբեք չհանդիպել..Ցանկանալով վերջնականապես ջնջել սիրեցյալին իր մտքից, կոմպոզիտորը փորձում էր հանդիպել ուրիշ կանանց հետ, սակայն, ապարդյուն… այնքան էր մեծ հաջողություններ չէր վայելում կանանց շրջանում..նրան չթին սիրում…

Լինելով չափազանց անկեղծ ու ճշմարտախոս մարդ շատ հաճախ կոպիտ և ոչ բարեկիրթ մարդու տպավորություն էր թողնում: Նրան անվանում էիր բիրտ ու անկիրթ, չնայած, որ նա ընդամենը ճշմարտությունն էր ասում…

Բեթհովենի մահից հետո սեղանի զզրոցում հայտնաբերեցիմ մի նամակ՝ հասցեագրված իր <<Անմահ սիրեցյալին..>>

""Իմ հրեշտակ, իմ ամեն ինչ, իմ Ես…ինչո՞ւ է խոր վիշտն այնտեղ, ուր անհրաժեշտությունն է գերիշխում..մի՞թե մեր սերը կդիմակայեր զոհաբերությունների գնով, ամբողջականից հրաժարվելու գնով…մի՞թե հնարավոր է փոխել իրավիճակը, երբ դու ամբողջապես իմը չես, երբ ես ամբողջապես քոնը չեմ…ի՞նչ կյանք է սա…առանց քե…այդքան մոտ..այդքան հեռու…այսքան արցունք և կարոտ քեզ համար…քեզ համար…քեզ համար…իմ կյանք..ամեն ինչ……""

<<Նույնիսկ անկողնում իմ մտքերը թռչում են դեպի քեզ, Իմ Անմահ Սեր…մեկ լցվում եմ ուրախությամ, մեկ՝թախիծով այն բանի սպասումից, թե ինչ է նախապատրաստոում ճակատագիրը մեզ համար… Ես կարող եմ ապրել կամ քեզ հետ, կամ՝ չապրել բոլորովին…

Այո, ես որոշեցի թափառել քեզանից հեռու, քանի դեռ ի վիճակի չեմ լինի գալ ու նետվել քո գիրկը…զգալ քեզ ամբողջովին իմն ու …վայելել այդ երանությունը… Այդպես պետք է լինի …Դու կհամաձայնես դրան… Չէ՞ որ դու չես կասկածում իմ հավատարմությանը…Երբեք մեկ ուրիշը չի տիրացել իմ ըտին, երբեք…երբեք…երբեք…

Օ, Աստված իմ, ինչո՞ւ բաժանվել նրանից, որին սիրում ես այսքան…Ծանր է իմ կյանքը…Քո սերը միաժամանակ ինձ դժբախտ և երջանիկ է դարձնում…

Ի՛մ հրեշտակ, եղի՛ր հանգիստ…եղիր հանգիստ…միշտ սիրիր ինձ… ինչպիսի խենթացնող ցանկություն ունեմ քեզ տեսնելու…Դու –իմ կյանք-Իմ ամեն ինչ…Մնաս Բարով…Սիրիր ինձ առաջվա պես…Երբեք մի կասկածիր հավատարմությանս…

Հավերժ քո…հավերժ իմ…Հավերժ ենք մենք-մեր

ԿԱԽԱՐԴԱԿԱՆ ՀՆՉՅՈՒՆՆԵՐԻ ԱՐՔԱՆ՝ ԸՍՏ ԿՈԼՈՍՈՎԱՅԻ

Տաղանդավոր պատանու համար բախտորոշ եղավ հանդիպումը Մոցարտի հետ…

Լսելով Բեթհովենին՝ Մոցարտը հայտարարեց.

-Ուշադրությո՛ւն դարձրեք այս պատանուն: Նա բոլորին կստիպի խոսել իր մասին:

Բեթհովենը երաժշտության դասեր է վերցնում ժամանակի համբավավոր կոմպոզիտոր Հայդնից, միաժամանակ՝ ստեղծագործում: Շուտով այնքան է հռչակվում, որ շատ ազնվական տներից հրավիրվում է՝ դառնալու սալոնային երաժիշտ: Միշտ հավատարիմ իր ազատատենչ, ըմբոստ ոգու թելադրանքին՝ Բեթհովենը կտրականապես հրաժարվում է՝ նախընտրելով մնալ աղքատ, բայց չապրել որևէ մեկի հրամանի ներքո, չկատարել պատվեր, թելադրանք: Բնավորությամբ անկախ՝ նա սարսափում էր կաշկանդող, կախյալ վիճակից: Նույնիսկ գանգրացված կեղծամը, որը այն ժամանակ կրում էին մեծազարմ մարդիկ և արվեստագետները, Բեթհովենը դեն նետեց: Լինել ազա՛տ, ինքնիշխա՛ն, չխոնարհվե՛լ, մեջք չծռել, չշողոքորթել-ահա նրա հավատամքը…

Մեծ կոմպոզիտորը հիացած էր Նապոլեոն Բոնապարտով….Նա կարծում էր, թե Նապոլեոնը կդառնա հեղափոխական պայքարի հերոս և ժողովրդին կտանի ազգային-ազատագրական մարտերի… Ահա թե ինչու իր հռչակավոր երրորդ սիմֆոնիա անվանեց <<Բոնապարտ>>:

Խաբված զգաց Բեթհովենը, երբ լսեց, որ Նապոլեոնը իրեն կայսր է հռչակել:

-Հիմա նա կոտնահարի ժողովրդի իրավունքները,-որոտաց զայրագին,-իրեն բոլորից բարձր դասելով՝ կդառնա սովորական բռնակալ:

Նա պոկեց սիմֆոնիայի ընծայաթերթը, պատռեց և վերցնելով մի մաքուր թուղթ՝ գրեց.<<Հերոսական սիմֆոնիա>>: Կայսրը չէր կարող լինել նրա ստեղծագործության հերոսը: Հերոսը ժողովուրդն է:

Քսանյոթ տարեկանում Բեթհովենն սկսեց խլանալ…. Վիրահատությունները չօգնեցին… Հիվանդությունը վերջնականապես հաղթեց… սակայն կոմպոզիտորը օժտված էր բացառիկ կամքով:

<<Ես կբռնեմ ճակատագրի կոկորդից, և նա չի կարող ինձ լիովին տապալել,-գրում էր բարեկամներին,-հաղթանակ՝ պայքարի միջոցով>>:

<<ԻՆՆԵՐՈՐԴ ՍԻՄՖՈՆԻԱՆ>>

Խուլ վիճակում նա հրաշքներ գործեց… Ներքին լսողությամբ գրեց համաշխարհային երաժշտության ամենապայծառ էջը՝ <<Իններորդ սիմֆոնիան>>:ը…>>

ԿԱՌՈՒՑՎԱԾՔ

Սիմֆոնիան ունի 5 մաս՝
Ալլեգրո
Մոդերատո
Պրեստո
Լարգո
Ալլեգրետտո-Ալլեգրո

Օգտագործվող գործիքները հետևյալներն են՝ պիկոլո, 2 ֆլեյտա, 2 կլարնետ, 2հոբոյ, 2 ֆագոտ, 4 գալարափող, 2 շեփոր, 3 տրոմբոն, տուբա, ցիմբալ, մեծ և փոքր թմբուկ, լիտավր, եռանկյունի, տամբուրին և լարայիններ:

Իր կառուցվածքով և հնչողությամբ սիմֆոնիան ունի դասական դարաշրջանի ոգի: Կոմպոզիտորը ինքը դա չէր բացառում՝ ասելով, որ այն ուրախ և փոքր երաժշտական ստեղծագործություն է: 1946թ. սիմֆոնիան ներկայացվել է Ստալինի անվան մրցանակին, սակայն դրան չի արժանացել:

Կատարումը

1824թ. մայիսի 7-ին Վիեննայի մեծ համերգասրահում առաջին անգամ կատարվեց <<Իններորդ սիմֆոնիան>>: Դիրիժորական նոտակալի մոտ կանգնած էր հեղինակը… կանգնած էր ձևականորեն, սոսկ իբրև հեղինակ, ղեկավարել չէր կարող… Չէ որ նա խուլ է, չի լսում… Եվ իրոք, նրանից երեք քայլ հետ կանգնած էր իսկական նվագավարը… Ահա նա բարձրացրեց փայտիկը, և դահլիճը լցվեց հոգեպարար մեղեդիներով, անհավատալի հնչյուններով, չլսված մեղեդիներով…. Քանդվում, դղրդում էր դահլիճը ծափերից, սակայն թիկուքով կանգնած կոմպոզիտորըչի լսում, չի տեսնում ոտքի կանգնած հարյուրավոր մարդկանց հիացական դեմքերը… Վախենում է շրջվել, իմանալ իր երկարատև աշխատանքի արդյունքի գնահատականը… Այդ պահին նրան է մոտենում երգչուհիներից մեկը և բռնելով թևից՝ քնքշությամբ շրջվում է դեպի փոթորկող սրահը… Ծափահարում է դահլիճը հոտնկայս… ծափահարում էր կայսրը…

Շոստակովիչը և Սվյատոսլավ Ռիխտերը սիմֆոնիան երաժիշտներին և քննադատներին ներկայացրել են չորս ձեռքով: Այն այնուհետև կատարել է Լենինգրադի Ֆիլհարմոնիկ Նվագախումբը Լենինգրադում՝ Եվգենի Մրավինսկու գլխավորությամբ: Նույն օրը նրանք նաև

կատարել են Չայկովսկու հինգերորդ սիմֆոնիան: Այս համերգը ձայնագրվել և ներկայացվել է ռադիոյում: Առաջին կատարման ժամանակ Իոսիֆ Ստալինը ներկա է գտնվել դահլիճում և շատ զայրացել է սիմֆոնիան լսելու ժամանակ: Նա ցանկանում էր լսել մի սիմֆոնիա, որը կլիներ Բեթհովենի իններորդ սիմֆոնիայի ոճով:

Մոսկվայում սիմֆոնիան կատարվել է 1945 թվականի նոյեմբերի 20-ին Եվգենի Մրավինսկու և Խորհրդային Միության սիմֆոնիկ նվագախմբի կատարմամբ:

Սիմֆոնիան արժանացել է քննադատների գովասանքին:

1827թ… դրսում մոլեգնում է գարնանային տարերքը… Հոգեվարք ապրող կոմպոզիտորը բացեց աչքերը, ճիգով բարձրացավ և բռունցք ցույց տվեց երկնքին… Նա հանձնվել չէր ուզում…. Հաղթանակ՝ միայն պայքարով… Եվ նա հաղթեց… Մահը ընկրկեց՝ տեղը զիջելով անմահությանը…

<<FUR ELISE>>

Գողտրիկ, գեղեցիկ, կատարման մեջ թեթև այս փոքրիկ բագատելը (դաշնամուրային կարճ պիես) համաշխարհային երաժշտության հայտնի գլուխգործոցներից մեկն է հանդիսանում…. Շատերն են փորձել պարզել, թե իրականում ում է նվիրել Բեթհովենն այս գեղեցիկ ստեղծագործությունը… Մինչև օրս հստակ հայտնի չէ, թե ով է իրական հասցեատերը……

Օրիգինալ պարտիտուրան կորած է …

Կա կարծիք, որ Բեթհովենն այս չքնաղ բագատելը նվիրել է երգչուհի Էլիզաբեթ Ռյոկելին, որին սիրահարված էր…. (Էլիզան հետագայում ամուսնանում է Հումելի-Johann Nepomuk Hummel հետ, որը Մոցարտի աշակերտն էր ու Բեթհովենի ընկերը):

<<Էլիզա, հմայիչ փոքրիկս,,,>>,-ահա, այսպես էր նրան միշտ դիմում Բեթհովենը…. Նա դաշնամուրի դասեր էր <<առնում>> կոմպոզիտորի մոտ ….. Էլիզաբեթը, որին ընկերները պարզապես Էլիզա էին անվանում, 19 տարեկան էր… Բեթհովենը 39-ը …Շատ էր դուր գալիս Էլիզան Բեթհովենին… և նա գեղեցիկ սիրահետում էր նրան… Ա՜հ,,սիրառատ Մեր Բեթհովեն… հաճախ էր նրա սիրահարվում … ու հատկապես իր աշակերտուհիներին..)))

Էլիզան նույնպես անտարբեր չէր նրա հանդեպ… Այդ մասին սիրալիր վկայություն է թողել նա:

Ընկերոջն ուղղված մի նամակից իմանում ենք. <<Անհամեստորեն, որը բնորոշ է նրա բնույթին, նա Բեթհովենը) ամբողջ երեկո չէր դադարում կատարել ու <<ձեռ առնել>> ինձ… վերջ ի վերջո ես չգիտեի ինչպես ազատվել նրանից, քանի որ, զուտ իմ հանդեպ ունեցած մաքուր տրամադրվածությունից, կսմթում էր ձեռքերս ողջ երեկոյի ընթացքում…>>))):

(Չարուկ Բեթհովեն)))

Մեռնելուց առաջ նա Էլիզաբեթին է ուղարկում փոքրիկ մազափունջ(խոպոպ) և գիրչ.. այն գրիչը, որով նա գրում էր պարտիտուրաները…

Էլիզան մինչև կյանքի վերջ մնաց կոմպոզիտորի հավատարիմ ընկերն ու բարեկամը…. Ինչպես Էլիզաբեթն էր այս բագատելի հասցեատերը…. Շատ երաժշտագետեր պնդում են, թե վատ ձեռագիր է ունեցել Բեթհովենն ու այդ իսկ պատճառով անընթեռնելի է անունը, և միանշանակ չի կարելի ասել, որ այն Էլիզային է նվիրված…

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով հասկացանք, որ Բեթհովենը եղել է իր շամանակի անփոխարինելի դեմքերից մեկը: Ծնվելով և ապրելով հասարակ և անշուք պայմաններում՝ Բեթհովենը կարողացելա է զարգացնել իր մեջ բնատուր տաղանդն ու աստվախային շնորհները: Այդ ամենը կատարել է երբեմն հոր ստիպողական պահանջներից դրդված, որոնք հետապնդում էին միայն փառքի ձեռքբերում սեփական որդու շնորհիվ, որն էլ հետագայում մեծ հնարավորություններ կունենար հորն ապահովելու այդքան սիրելի խմիչքով ու շփացած կյանքով: Բեթհովենը իր համառ կամքի և անկոտրում բնավորության շնորհիվ կարողացավ հասնել համաշխարհային փառքի գագաթնակետին՝ իր հետևում թողնելով ժամանակի նշանավոր շատ երաժիշտների: Իր ըմբոստ և չենթարկվող բնավորությունը հիմնականում հոր հետ վատ հարաբերությունների արդյունք է եղել, որը հետագայում դարձել է բազմաթիվ խնդիրների բուն պատճառը:

Լինելով բնատուր տաղանդի տեր՝ Բեթհովենը հանրությանն է ավանդել բազմաթիվ գեղեցիկ և հրաշալի ստեղծագործություններ: Ինչպիսիք են շատերիս հայտնի և շատ սիրված <<Լուսնի սոնատը>>, <<9-րդ սիմֆոնիան>>, <<Ful Elise>>-ն և այլ հանրաճանաչ և սիրելի ստեղծագործություններ: Կյանքը բազմիցս ապացուցում է, որ բնությունը և բազմաթիվ դժվարություններով լի: Նույնը կատարվեց նաև Բեթհովենի դեպքում. Արդեն 27-ամյա երիտասարդը սկսում է կորցնել լսողությունը, մի աղետ, որից ավելի դաժանը երևի հնարավոր չէ պատկերացնել երաժշտության ասպարեզում գլուխործոցներ ստեղծող մի հանճարի համար: Բայց Բեթհովենը գտնվեց ուժեղ և չչոքեց կյանքի՝ իրեն հասցրած հարվածի առջև, այլ ոտքի կանգնեց և սկսեց ավելի ու ավելի ամրանալ:

Հենց այդ ժամանակ էլ ծնունդ առավ նրա ամենահայտնի և սիրված ստեղծագործություններից մեկը՝ <<9-րդ սիմֆոնիան>>:

Լյուդվիգ վան Բեթհովենը մահացավ 1827 թվականի մարտի 26-ին Վիեննա քաղաքում՝ հավերժ անմահ մնալով հետագա սերունդների համար: Բեթհովենի մահվան իրական տվյալները անհայտ են, կան միայն բազմաթիվ վիճելի տեսակետներ:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Արտասահմանյան երկրների երաժշտական գրականություն (հեղ. Ռ. Աթայան)
2. Երաժշտության դասագիրք (հեղ. Ա. Փահլեվանյան, Յու. Յուզբաշյան)
3. Հանրագիտարան